ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2018 թ. N 752-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) 19-րդ կետի 2-րդ պարբերությունում «անձանց» բառից հետո լրացնել «(բացառությամբ փոխկապակցված անձանց՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր)» բառերը.

2) 23-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների, ինչպես նաև ծխախոտի մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով կաթիլային համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է 750 000- ական ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքներն պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով:

Երեք ու բարձր տարիքի բազմամյա տնկարկների և բանջարեղենի մշակության դեպքում անտոկոս փոխառության տեսքով տրամադրվում է մեկ հեկտարի հաշվարկով 1 500 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասի չափով աշխատանքներն պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.»,

բ. 6-րդ ենթակետի «ա» պարբերությունում «3-րդ ենթակետի» բառերը փոխարինել «4-րդ ենթակետի» բառերով,

գ. 6-րդ ենթակետի «բ» պարբերությունում «3-րդ ենթակետի» բառերը փոխարինել «4-րդ ենթակետի» բառերով, իսկ «4-րդ ենթակետով» բառերը՝ «5-րդ ենթակետով» բառերով,

դ. 10-րդ ենթակետում «7-րդ ենթակետում» բառերը փոխարինել «8-րդ ենթակետում» բառերով.

3) N 3 ձևից հանել «ծխախոտի դեպքում՝ առնվազն մեկ, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ